

ARMENO-TURCICA

**ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ Ե. ԱՐՈՆՑԻ ԵՎ Ա. ԶԻՎԵԼԵԳՈՎԻ
ԳՆԱՀԱՏՄԱՍԲ**

1920 թ. օգոստոսի 10-ին եվրոպական դիվանագիտությունը ասպարեզ բերեց հայ ժողովրդի նկատմամբ իր «բարեհոգության» արտահայտություն հանդիսացող ևս մեկ փաստաթուղթ, որը շաղախված էր անորոշությամբ և, հատկապես Հայկական հարցում, զուրկ իրավագործվելու արտոնությունից:

Ասվածը հաստատելու համար անհրաժեշտ է վերլուծել Աևրի պայմանագրին նախորդող ժամանակահատվածը: 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում բուլշևիկները իրականացրին անարյուն հեղաշրջում: Ամբոխային տրամադրություն ստեղծելու վարպետները շուտով լույս աշխարհի հանեցին Արևմտյան Հայաստանի ինքնորոշման, ավելի ճիշտ՝ Թուրքիային նվիրաբերելու դեկրետը: Նույն 1917թ. դեկտեմբերի 23-ին (դեկրետի ընդունումից վեց օր առաջ) Լլոյդ Ջորջը շարունակվող պատերազմի վերաբերյալ բնութագրող ու ծրագրային հայտարարություն արեց: Անգլիական կառավարության հիշյալ հայտարարությունը տրամաբանական պատասխան էր Լենինի կառավարության նույն թվականի նոյեմբերի 11-ի «Արևելքի աշխատավոր մահմեդականներին» ուղղված կոչի, որտեղ պրոլետարիատի առաջնորդը մոլեռանդ թուրքական ամբոխին զսպելու և դեպի իր կողմը գրավելու նպատակով՝ հայտարարում էր, թե պատռում է Թուրքիան բաժանելու բոլոր պայմանագրերը, առավել ևս՝ նրանից «Հայաստան խլելու» մտադրությունը: Հայկական հարցը լուծելու թաքուն և բացահայտ պայքարում հաղթանակեց բուլշևիզմը:

Աշխարհաքաղաքական փոփոխությունների առկայությունը նկատի ունենալով, դիրքերը չզիջելու, նոր ասպարեզներ նվաճելու վճռականությամբ՝ գործնական քայլերի դիմեց նաև ԱՄՆ-ը: 1918թ. հունվարի 8-ին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը Կոնգրեսում արտասանեց իր հայտնի, տասնչորս կետ պարունակող ճառը: Հաստատելով Անգլիայի վարչապետի տեսակետները՝ նախագահի ծրագրային ելույթը ամրակայում էր այն միտքը, որ Թուրքիայի հողային իրավունքները պետք է ճանաչել այն տարածքներում միայն, որոնք բնակեցված են թուրքերով, իսկ մնացած շրջանները, որտեղ բնակվում էին ուրիշ ազգություններ, ստանալու էին ազատություն: Բուլշևիկներին հակակշիռ քայլն արդեն պատրաստ էր: Թող այն տպավորությունը չստեղծվի, թե դիվանագիտական այդ պայքարում կենտրոնականը Հայկական հարցն էր: Խորացող հակամարտությունը ծնեց նոր փաստաթղթեր՝ Բրեստի և Բաթումի պայմանագրերը, որոնք, սակայն, թեև լռությամբ ընդունեցին «դաշնակից» պետությունները, բայց նրանք քայլ առ քայլ իրականացնում էին Անդրկովկասի նորանկախ պետությունների վրա քաղաքական ու տնտեսական գերիշխամություն հաստատելու իրենց խնդիրները:

Առաջին աշխարհամարտն ավարտվեց: Պարտված թուրքիան սպասում էր մեծերի դատավճռին: 1918թ. հոկտեմբերին երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց, լուծարվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը: 1918թ. հոկտեմբերի 30-ին դաշնակիցների ու թուրքիայի միջև կնքվեց Մուդրոսի զինադադարը: Հայաստանի հանրապետության սահմանները ընդարձակվեցին՝ կազմելով 71 հազար քառակուսի կմ, հույսեր էին ծնվում Արևմտյան Հայաստանի ազատագրության համար, որովհետև մեծ տերությունները ակտիվորեն քննարկում էին Հայկական հարցը: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ՀՀ կառավարությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ կազմեց պատվիրակություն, որը մեկնեց Եվրոպա:

Հակակշիռ այդ ամենին՝ բուլշևիկներն ու թուրք քաղաքական գործիչները սերտացնում էին հարաբերությունները, որտեղ մեծ էր էնվերի, Զեմալի, Նազըմի, Բեհեդդին Շաքիրի դերը: Բեռլինում նույն ուղղությամբ էր աշխատում նաև Թալեաթը:

ՀՀ պատվիրակությունը (Ա. Ահարոնյան, Ս. Պապաջանյան, Հ. Օհանջանյան) Փարիզում հանդիպեց Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը և, համաձայնության գալով խաղաղության կոնֆերանս ներկայացրին համատեղ ծրագիր՝ Միացյալ Հայաստանի քարտեզով:

Թուրքիայի հետ ապսուգա պայմանագրի նախապատրաստմանն էր նվիրված Իտալիայի Ամն-Ռեմո քաղաքում գումարված կոնֆերանսը, որտեղ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարներն ընդունում էին, որ պետք է ստեղծել միասնական հայկական պետություն, բայց չէին կարողանում որոշել, թե ինչպես պետք է կազմավորվի, պաշտպանվի և գոյատևի այդ պետությունը: Գերագույն խորհուրդը՝ ընդունելով Լ.Ջորջի նախագիծը, այն ներկայացրեց ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին՝ Հայաստանի մանդատը ընդունելու և ապագա պետության սահմանները գծելու առաջարկությամբ: Արդյունքում, 1920թ. ապրիլի 24-ին, ԱՄՆ-ը փաստացի ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ հունիսի 1-ին Անատոլի 23 կողմ, 52 դեմ հարաբերությամբ մերժեց Հայաստանի մանդատը:

Տեսնում ենք, որ Հայկական հարցի նկատմամբ ստեղծվել էր մեծ հետաքրքրություն, մեկ տարվա ընթացքում (1919-1920թթ.) այն լսվեց Փարիզում, Լոնդոնում, Սան-Ռեմոյում, արժարժվում էր թուրք-բուլշևիկյան բանակցություններում: Այս ամենը ոգևորիչ դեր էր խաղում: Կանխատեսվում էր լավագույն ապագա, բայց հայ քաղաքական գործիչները խորամուխ չէին (հնարավորությունների տեսանկյունից) մեծ ընդգրկում ներկայացնող միջազգային հարաբերություններին, որն էլ վճռորոշ դարձավ Հայկական խնդրի հետագա ճակատագրի հարցում:

1920թ. ապրիլի 26-ին, Քեմալի՝ Լենինին ուղղված նամակով սկսվեց թուրք-բուլշևիկյան դավի նախապատրաստության առաջին փուլը, որտեղ որպես երաշխիք ապագա համագործակցության, Ադրբեջանը խորհրդայնացվեց: Աս ահագանգի դեր խաղաց դաշնակիցների համար:

Ակսվեց մի շրջան, երբ փորձարկվում էին նորաստեղծ պետությունների դիրքորոշումները: Քանի որ գործնական հողի վրա չէր տեղափոխվում դաշնակիցների ծրագիրը, ՀՀ կառավարությունը ժողովրդի ֆիզիկական գոյությունն ապահովելու նպատակով՝ բանակցություններ սկսեց բուլշևիկյան Ռուսաստանի հետ, որը՝ որակվեց որպես ռուսասիրություն: Միայնակ թողնելով Հայաստանի հանրապետությանը՝ դաշնակից անվանյալները, բացի տնտեսական որոշակի օգնությունից, չդիմեցին որևէ գործնական քայլի՝ դրանով իսկ նպաստելով թուրք-բուլշևիկյան մահացու հարվածի նախապատրաստմանը:

Ահա սրանք են Աևրին նախորդած ժամանակահատվածի նկարագրությունները, դիվանագիտական պատկերը, որը վճռորոշ դեր խաղաց մեծ աղմուկ ու ոգևորություն ծնած դաշնագրում: Պայմանագրի ստորագրումը տեղի ունեցավ 1920թ. օգոստոսի 10-ին՝ Փարիզի արվարձան Աևրում: Պայմանագրի երրորդ մասի վեցերորդ բաժնի 88-93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին:

Հայաստանը հռչակվեց Ազատ և Անկախ պետություն, Թուրքիան ճանաչեց հայկական պետության գոյությունը, դաշնակիցների կողմից գծված նրա սահմանները: Դաշնագրի գործադրումը, որ ըստ նախատեսվածի, գործի պիտի դրվեր ստորագրելուց երեք ամիս հետո, հետաձգվեց մինչև վեց ամիս, իսկ վերջնական արդյունքում այն մոռացության մատնվեց: Մոռացության մատնելու հիմքը դրվել էր նույն օգոստոսի 10-ին, մինչև պայմանագրի ստորագրումը, երբ գլխավոր հորջորջվող պետությունները մի առանձին պայմանագիր ևս ստորագրել պարտադրեցին հայկական պատվիրակությանը, որի իմաստը Հայաստանի վրա՝ հսկողության սահմանում էր, ասել է՝ մեծերը շնորհ կատարելով Հայաստանին, բոլորովին էլ մտադրություն չունեին ապահովել և վկան լինել նրա բացարձակ անկախության ու ազատության:

1920թ. նոյեմբերի 22-ին, ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ կատարվել է սահմանագծման աշխատանքը: Ազատություն էին ստանում Արևմտահայաստանի էրզրում, Տրապիզոն, Վան եւ Բիթլիս վիլայեթներից առանձնացված 90 հազար քառ. կիլոմետր տարածքները, որոնք միանալով՝ Արևմտյան Հայաստանի արդեն ազատագրված շրջանների հետ կազմելու էին 161.330 քառ.կմ ընդհանուր տարածք:

Թվում էր, թե հայ ժողովրդի քսանական թվականների սերունդը լուծում էր ազգային գերխնդրի զգալի մասը: Բայց դա արտաքին տպավորություն էր, որովհետև թուրք-բուլշևիկյան զնալով ընդարձակվող կապերին խանդոտ նայող մեծերը, Թուրքիայից «կորզելով» բուլշևիզմի դեմ պայքարի խոստում և պատճառաբանելով, որ Հայաստանն արդեն անկախ չէ, որ հաստատվել է խորհրդային բռնատիրություն, հրաժարվեցին պայմանագիրն ի կատար ածելուց՝ թույլ տալով մեծագույն դավաճանություն:

Ավելին, թե՛ գծված սահմանները, թե՛ դեպի ծով ելք տրամադրելը այդ օրերին արդեն անհավանական էին թվում, անհավանական այնքա-

նով, որ չդժգոհելով մեծերի՝ քաղաքականությունից, թուրքական ներկայացուցիչը հիշեցրեց, թե դեպի հարավ Հայաստանի ընդարձակման անհրաժեշտություն չկա այսինքն՝ մեր դարավոր թշնամին այդ պահին արդեն ճիշտ էր ընկալել, որ հետաձգվող սահմանագծումն ունի միայն մեկ նպատակ՝ սպասել բուլղարի գործողություններին, և եթե հայությունը նորից կնախընտրի ռուսական կողմնորոշումը, ապա հրաժարվել պայմանագրից, փոփոխել այն և կարմիր Ռուսաստանի դեմ դուրս բերել նեղուցների պահակ թուրքիային՝ զսպելով կարմիր հրեշի ծավալումը:

Այս ամենն արդյունքն էին ուժերի նոր տեղաբաշխման, տերությունների աշխարհաքաղաքական նոր ուղղությունների հստակեցման, գերիշխանության նոր տարածքներ նվաճելու քաղաքականության, որոնց խաչմերուկներում, արդեն քանիներորդ անգամ, խճճվում և լաբիրինթոս էր նետվում Հայկական հարցը: Այս գործում իրենց ավանդը ներդրեցին նաև ազգային գիտակցությունը կորցրած հայ բուլղարները, որոնք թուրքիայի հետ կնքված պայմանագրով հրաժարվում էին Սևրի դաշնագրից և այն որակում նոր «տառապանք»:

Սևրի դաշնագրի պատմական մեծ ծառայությունը Հայկական հարցին այն էր, որ մեծերը պաշտոնապես ճանաչեցին իր Հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները:

Իրականության այդպիսի ընկալումն ունեին նաև ժամանակակից հայ գործիչներից շատերը: Ոգևորության ընդհանուր պատկերի վրա կատարվում էին սթափ վերլուծություններ, կանխատեսումներ, Հայկական հարցի ճակատագրի նկատմամբ խորիմաստ եզրահանգումներ: Նշանավոր պատմաբան Ն. Ադունցը ևս կիսում էր համակված ոգևորությունը, սակայն վերապահումներով. «Թուրքիայի ճակատագիրը վճռված է: ...Օսմանյան կայսրությունը, անկասկած, կործանված է: Նա ստացավ պատիժ, որին լիովին արժանի էր: Վերջապես եվրոպան քաջություն ունեցավ եթե ոչ ամբողջապես խորտակելու, գեթ դուրս քաշելու թունավոր սողունի ատամները, որին նա դարեր շարունակ սնուցել էր իր իսկ սեփական քաղաքակրթության կրծքին», սակայն այդ ամենը չեն կարող գեթ սփոփանքի դեր խաղալ այն անլուր տառապանքների համար, որին ենթարկվեց հայ ժողովուրդը: Իսկ դաշնակիցները ոչինչ չարեցին «իրենց կրտսեր եղբոր՝ հայերի նկատմամբ», «ոչ մի միջոց չեն չառնվեց հրով ու սրով ցանուցի արված հայերին» օգնելու համար: Հակառակ սպասվող խոստումներին, «Հայաստանի սահմանների կարևորագույն հարցը գործնականում բաց է մնում», «Սահմանը Հայաստանի և Թուրքիայի միջև նույնպես մնում է չորոշված», և այդ ամենի արդյունքում՝ «Հայկական հարցի լուծումը, փաստորեն հետաձգված է... Հայաստանը, որ ասես եռացող կաթսա լինե՞ր թուրքական հնոցում, կրկին դատապարտված է սպասելու»:

Պատասխանելով իր իսկ առաջադրած ինչուներին, Ն. Ադունցը բացառում է որևէ արգելք, որը կարող էր խոչընդոտել լիարժեք լուծում տալու Հայկական հարցին: Սակայն ամենագավեշտալին այն է, որ փոխա-

մ նակ արդարացի լուծում տան բազմաչարչար հարցին, դաշնակից հոր-
ջորջվողները խուսանավելու ընդարձակ ասպարեզներ բացեցին Թուր-
քիայի համար և ամենադավաճանական քայլը՝ Հայկական տարածքների
վրա տեղակայեցին Քրդստան հասկացությունը: «Ապշեցուցիչ հարված»
անվանելով եվրոպական դիվանագիտության հորինվածքը, Ն. Ադոնցը
այդ նորամուծությունը համարում է թուրքական կառավարության քաղա-
քականության ընդօրինակում, նրա՝ Հայաստանը քրդացնելու ծրագրի ի-
րագործում: Մեծ եղեռնը, հայրենիքի կորուստը ուրիշ ոչինչ չի նշանա-
կում, եթե ոչ հայության նկատմամբ թուրք եվրոպական դաժան քաղաքա-
կանության իրականացում, որն ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ նաև «ժողովրդի հո-
գեկան բնաջնջում, որն ավելի ծանր է, քան նյութականը»²:

Քննելով հայրենիք հասկացության սկզբունքները, հայրենիքը հա-
մեմատելով կենդանի օրգանիզմի հետ, վիճակագրական ու մարդկային
գործոնների քննություն կատարելով, վերլուծելով հայերի ռուսական
կողմնորոշման դրդապատճառները, հայտնելով, որ քաղաքական այդ
դիրքորոշումը եվրոպական դիվանագիտության պարտադրված քայլն էր,
նրանց՝ հայերին իրենցից հեռացնելու քաղաքականության արդյունքը, Ն.
Ադոնցը պատասխանում է Հայկական հարցի նկատմամբ տերությունների
վերաբերմունքի հիմնական պատճառը. «Այն պահից, ինչ հայկական
հարցը բարձրացավ, այդ երկիրը եվրոպայի աչքին հանդես եկավ որպես
մի մուրացկան, որը հովանավորություն է աղերսում իր բուն ֆիզիկական
գոյության համար: Թերևս այդ պատճառով էլ եվրոպական դիվանագետ-
ները գտնում են, որ որևէ մի նվեր, լինի դա թեկուզ երկու կամ երեք վիլա-
յեթ, լիովին բավական է մի մուրացիկ ժողովրդի համար»³: Սակայն այդ-
պես չէ իրականում: Հայերը, որ կրել են պատմական ճակատագրի դա-
ժան հարվածները, երազել են իրենց մարդկային իրավունքների վերա-
կանգնմանը, «ինքնորոշման իրավունքի», «ազգային բաղձանքների» ի-
րականացմանը, որին հասնելու համար փնտրել են գործակից ու դաշնա-
կից, բայց ոչ մուրացկանություն. ավելին. «Հայաստանը կարիք ունի ոչ
միայն աշխարհագրականորեն կլորացված սահմանների, այլ մշակութա-
յին դրացիության», ինչը համաշխարհային քաղաքակրթությանը ծառայե-
լու հայերի բնածին հատկությունն է: Սակայն կատարվեց բոլորովին անս-
պասելին: Դաշնակիցները, որ նախագահ Վիլսոնի հետ միասին «քաջա-
տեղյակ են Հայկական հարցին», այն լուծելու բոլորովին հակառակ ուղին
ընտրեցին, «դաշնակիցների դիվանագիտությունը այլ կերպ գործեց և
Հայաստանը դրեց անտանելի դրության մեջ: Երկիրը շրջապատվեց ան-
քաղաքակիրթ մահմեդական պետությունների օղակով: Արևմուտքից
Թուրքիայի և արևելքից Պարսկաստանի մերձավորությունը անբավարար
թվաց, ուստիև թաթարական Ադրբեջանն ու Քրդստանը ստեղծվեցին
հյուսիսում և հարավում»⁴:

Այստեղից էլ, Սևրի պայմանագիրը ոչ միայն չլուծեց Հայկական
հարցը, այլ առավել խճճված վիճակ ստեղծեց հայ ժողովրդի համար, ժո-
ղովուրդ, որ դարեր շարունակ մաքառելով բռնատիրությունների դեմ,

ծգտում էր «ազատ և անկախ երկրի համար, բայց ոչ ցերեկվա լույսից փակ բանտի համար, բանտ, որին հսկում են թուրքերը, թաթարները, քրդերը և նրանց բարեկամները»⁵:

Մինչդեռ, դաշնակիցները Սևրի ընդարձակ սրահներում եթե մտահոգ էին հայերի ռուսական կողմնորոշման հարցում, ապա «ի զորու էին մեկընդմիջտ վերջ տալու հայկական ծգտմանը դեպի հյուսիս, խարխլելով դրա պատմական հիմքերը: Սակայն նրանք ավելի լավ բան չմտածեցին, քան սեղմել Չայաստանը մահմեդական պետությունների շրջանակի մեջ...»⁶:

Հիասթափությունը, պատմական անարդարությունը ժամանակավրեպ հասկացություններ են: Պատմական ճշմարտությունը երբեք չի կարող մոռացության մատնվել: Այն կբարձրանա նվաստացված վիճակից, քանզի քաղաքակիրթ մարդկությունը չի կարող ուրանալ մի ժողովրդի արդար դատը, որը ուրիշ ոչինչ չէ, քան մարդու իրավունքների հիմնարար սկզբունքների պաշտպանություն: Եվ, իբրև գալիքի կանխատեսում Ն. Ադոնցը եզրափակում է. «Հայկական հարցը վաղուց դադարել է սոսկ հայկական լինելուց: Այն ժամանակակից մարդկության գիտակցության հարցն է... Հայ ժողովուրդը դեռևս խեղդվում է արյունից ու անհամբեր սպասում է անկողմնապահ իրավացի վերջնական վճռի մի ակտի մասին, որն ստորագրել են դաշնակիցները՝ կանգնած մեկ միլիոն նահատակված հայերի դիակների վրա»⁷:

Ն. Ադոնցի վերլուծությունները քաղաքական շահամուլության ետևից վագոլ դիվանագիտության արդարացի գնահատականները լինելուց բացի, առօրյական են նաև: Առօրյական, քանզի Հայկական հարցի նկատմամբ ուրացության խորհրդանիշ Սևրի պայմանագիրը ուսանելի դաս է, քննադատական վերլուծության ուսուցանող ծեռնարկ, ապացույցը այն բանի, որ 87 տարի առաջ լույս աշխարհ եկած պայմանագիրը, Նրա կերտողները այսօր էլ շարունակում են նույն քաղաքականությունը, առանձնացում չտեսնելով քաղական պարտադրանքների ու զարգացումների մեջ, մինչդեռ ժողովուրդների պատմական ճակատագիրը երբեք չի կորցնում իր հիշողությունը և հակված է սրբագրելու այն անարդարությունները, որոնք բանտ են ստեղծում մի ժողովրդի համար, որն ինչքան էլ հեռանում է անցյալից, այնքան պարզ ու հստակ է ընդգծում հայրենիք հասկացության գաղափարը:

Հայկական հարցը, նրա նկատմամբ տերությունների ու հատկապես Ռուսաստանի վերաբերմունքի խնդիրները, բազմաչարչար խնդրի վերաբերյալ պայմանագրերի քննությունները առանցքային տեղ են զբաղեցնում Ա. Ջիվելեզովի ուսումնասիրություններում⁸:

1817-1920 թթ. իրարարժությունները քննելով ժամանակակցի տեսանկյունից Ա. Ջիվելեզովը յուրահատուկ մեկնաբանություն է տալիս Հայկական հարցին, գրելով, որ այն ծագել է պետական բարձր քաղաքականության նկատմամբ հայերի վերաբերմունքից, երբ «հայերը իրաժարվում են համբուրել այն ծեռքը, որը նրանց հարված է հասցնում»⁹:

Հայերի նկատմամբ Թուրքիայում և Ռուսաստանում իրականացվող հալածական քաղաքականությունը արդյունք է հայերի հայրենիքը զավթելու ծրագրի: Եվ որպեսզի այն իրականանար, անհրաժեշտ էր թուրքացնել կամ ռուսականացնել բնիկ ժողովրդին: Տնտեսական շահն ընդունելով գործունեության ուղենիշ, Եվրոպական տերությունները ակնատեսն ու վկան լինելով այդ քաղաքականության, ոչ միայն օգնության ծեռք չեն մեկնում հայերին այլև մտնելով խորը հակասությունների մեջ, գերադասելով թե՛ Ռուսաստանում, թե՛ Թուրքիայում ազդեցության ամրացման ընթացքը քաղաքակիրթ ժողովրդին փրկելու միջոցառումներ իրականացնելուց, իրենք են դառնում հայերի դժբախտությունների հիմնական պատճառները արմատավորողները: Այդպես շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտը: Չհավատալով, որ 1914 թ, ռուս-թուրքական համաձայնագիրը բարեհաջող ավարտ կունենա, Ա. Ջիվելեզովը կանխատեսում էր, որ այդ արժանագրությունը թաքնված հնարավորություն էր տալիս թուրքերին սրով լուծելու հայերի ճակատագիրը¹⁰:

Բազմակողմանի քննելով Հայկական հարցի լուծման ուղիները, Ա. Ջիվելեզովը հանգում էր այն կարծիքին, որ խնդրի լուծման միակ տարբերակը ինքնավարությունն է: Եթե այն կարելի էր իրականացնել մինչև 1915 թ., ապա դրանից հետո անհմաստ է մտածել այդ ուղղությամբ, որովհետև Գերմանիայի հովանավորությամբ բնաջնջելով հայությանը, թուրքական պետությունը իրականացրեց իր վաղեմի երազանքը¹¹:

Առաջին աշխարհամարտն ավարտվեց և հայերը, որ միլիոնավոր զոհեր էին տվել, հույս ունեին, թե կստանան «համապատասխան քաղաքական հատուցում»¹²:

Կիսելով ռուս քաղաքագետ Մ. Կովալևսկու միտքը՝ «Հայկական հարցը մեծ է և դժվարին», Ա. Ջիվելեզովը քննելով ասվածի իմաստը, եզրակացնում է, որ հայերը լինելով «ռուս-թուրքական քաղաքականության զոհերը», հույս չեն կարող կապել նաև բուլշևիկյան Ռուսաստանի հետ, որը հրապարակելով Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մասին դեկրետը, փաստորեն այնքան դժվարությամբ նվաճված Հայաստանը վերադարձնում է Թուրքիային¹³:

Հայկական հարցում իրադարձությունների զարգացման կիզակետը Աևրի պայմանագիրն էր: Եթե սկզբում Ա. Ջիվելեզովը շատերի նման հույս ուներ, թե վերջապես լուծում կստանա խնդիրը, սակայն պայմանագիրը իր բովանդակությամբ ու անիրականանալի միտումներով խոր հիասթափություն ծնեց, ինչն էլ Ա. Ջիվելեզովին իրավունք էր տալիս պատկերավոր գնահատական տալ նրան. «Աևրի պայմանագրի որոշումները, պարզվեց փխրուն են, ինչպես սևերյան ճենապակին»¹⁴: Հայկական հարցում այն զուրկ էր իրական քայլ կատարելու հնարավորությունից, որովհետև այն ստորագրող տերությունները ոչ թե անհանգստանում էին հայերի ճակատագրով, այլ իրենց «հմպերիալիստական շահերով»¹⁵:

Եվ այսպես միջազգային դիվանագիտության զգրոցներում իր տեղը գրավեց Հայկական հարցի հետ կապված ևս մեկ պայմանագիր, որի

գործընթացն այնքան հավատարմ էր հայ ժողովուրդը: Տառապանքների բովանդակում անցած հայությունը չէր էլ կարող մտածել, որ դաշնակիցները, որոնց հաղթանակին այդքան զոհեր էր մատուցել, մոռացության կմատնեն իրենց արդար դատը: Այդքանը դեռ բավական չէր, նույն դաշնակիցներն ու բուլղարացիներն Ռուսաստանը մախաժեռեցին ու կազմակերպեցին Լոզանի շքահանդեսը և ուրանալով իրենց իսկ ստորագրած պայմանագիրը, վավերացրեցին հանրապետական հորջորջվող Թուրքիայի ծննդյան վկայականը:

Երիցս ճիշտ էր Ա. Ահարոնյանը, երբ մեկնաբանելով եվրոպական ու ռուսական դիվանագիտության դավաճանությունը, գրում էր. «Մեր լեռների վրա ծյունն ավելի ծանր էր, քան մեր լեռների տարողությունը: Մեր լեռների ծյունը չէր միայն մեր վրա թափվողը, այլ ամբողջ աշխարհի ծյունը: Մեր ծյունը շատ ծանր եղավ մեր ժողովրդի ցավը ծանր եղավ, մեր մեջքը խորտակվեց և երկրե երկիր ընկանք: Ժամանակն է, որ խորհենք, իրար հասկանանք»¹⁶:

Իրատեսական խորհուրդ, որն այսօր էլ օրապահանջ է և ուսանելի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 12, 13, 16, 17:
2. Նույն տեղը, էջ 15, 19:
3. Նույն տեղը, էջ 24:
4. Նույն տեղը, էջ 26:
5. Նույն տեղը, էջ 33:
6. Նույն տեղը, էջ 33:
7. Նույն տեղը, էջ 33:
8. Ջ. Կիրակոսյան, Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие, Երևան, 2007:
9. Նույն տեղը, էջ 74:
10. Նույն տեղը, էջ 115:
11. Նույն տեղը, էջ 143, 163:
12. Նույն տեղը, էջ 225:
13. Նույն տեղը, էջ 232:
14. Նույն տեղը, էջ 247:
15. Նույն տեղը:
16. Ա. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Երևան 2001, էջ 117: